

**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԵՐԿԻՆԶՎՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(ըստ մարդահամարների և էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի)
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՆՏՅԱՆ**

Յուրաքանչյուր ժողովրդի էթնիկական պատմության մեջ նշանակալից տեղ ունեն էթնոլոգիական պրոցեսները: Ամենատարբեր էթնիկական ընդհանրությունների լեզվի և լեզվական գործընթացների ուսումնասիրությունը լույս է սփռում դրանց պատմության բազմաթիվ հարցերի վրա: Լեզուն էթնիկական ընդհանրության ամենահիմնական հատկանիշներից մեկն է, և այս հանգամանքը նրան դարձնում է մշակույթի յուրահատուկ հուշարձան:

Լեզվական գործընթացների ուսումնասիրումը կարևոր է ինչպես ընդհանուր տեսական խնդիրների, այնպես էլ կիրառական հարցերի (լեզվական քաղաքականություն, լեզվական շինարարություն և այլն) լուծման առումով, հատկապես, երբ խոսքը վերաբերում է այնպիսի բազմազգ երկրների, ինչպիսիք են ՍՍՀՄ-ը, Հարավսլավիան, Հնդկաստանը, Հարավ-Արևելյան Ասիայի և Արևադարձային Աֆրիկայի մի շարք երկրները: Սովետական Միությունը բազմազգ երկիր է, սակայն լեզվական գործընթացների զարգացման բնորոշ ձևը ոչ թե բազմալեզվությունն է, այլ երկլեզվությունը, որի ժամանակ որպես հաղորդակցվող լեզուներ հանդես են գալիս տվյալ էթնիկական ընդհանրության լեզուն և ռուսերենը: Այս հանգամանքը հրամայական է դարձնում ՍՍՀՄ-ում ազգամիջյան հաղորդակցության լեզվի կիրարկման հետ կապված խնդիրների գիտական ուսումնասիրությունը:

Լինելով Սովետական Միության հնագույն ժողովուրդներից մեկը, հայերը տարբեր քաղաքական, պամաաշխարհագրական և այլ հանգամանքների բերումով իրենց վրա միշտ կրել են երկլեզվության տարածմանը նպաստող գործոնների ազդեցությունը: Ինչպես հայ, այնպես էլ օտար աղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ կան հայոց մեջ երկլեզվության ամենատարբեր ձևերի գոյության մասին: Դարերի ընթացքում Հայկական լեռնաշխարհի տարածքում և նրա սահմաններից դուրս հայոց լեզուն և հայերը աշխույժ էթնիկական շփումների մեջ են գտնվել ասորերենի, հունարենի, պարսկերենի, լատիներենի, արաբերենի, թուրքերենի, վրացերենի, ռուսերենի և այլ լեզուների ու դրանց կրողների հետ: Հատկանշական է, որ հայերի մեջ երկլեզվության մասին վկայող առաջին գրավոր աղբյուրը թվագրվում է մ. թ. ա. V դարով. Քսենոփոնն անկեղծ զարմանքով գրում էր, որ հայերի մեջ անգամ կանայք երկլեզվակիր են¹:

Հայ ժողովրդի էթնիկական պատմության ընթացքում միանգամայն նոր երևույթ էր սովետական շրջանի հայ-ռուսերեն երկլեզվությունը: Նոր էր ոչ միայն երկրորդ լեզվի տարածման բացառապես կամավորությամբ, այլև տարածական և դասային ոչ մի սահմանափակում չճանաչող շափերով:

ՍՍՀՄ 1970 և 1979 թթ. մարդահամարների և էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերը թույլ են տալիս վեր հանել հանրապետության հայ բնակչության՝ ազգային-ռուսերեն երկլեզվության հիմնական միտումներն ու օրինաչափությունները: Երկլեզվության խնդիրներին անդրադառնալիս սկզբունքային նշանակություն է ստանում երկրորդ լեզվի տարածման գործոնների հարցը (աղ. № 1):

Ինչպես վկայում են մարդահամարների նյութերը, երկլեզվությունն ամենից քիչ տարածված է մինչև 10 տարեկանների խմբում՝ ինչպես 1970 թ., այն-

¹ Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 96:

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ Յ Ի

Երկրեզվության տարածումը Հայկական ՍՍՀ հայ բնակչության մեջ (%-ներով)² ըստ տարիքային խմբերի (1970, 1979 թթ. մարդահամարների նյութերով)³

Մարդահամարի տարին	Տարիքային խումբը							Ընդամենը
	0—10	11—19	20—29	30—39	40—49	50—59	60 և ավելի	
1970	2,8	20,2	48,4	39,7	37,9	28,7	15,5	23,4
1979	6,3	29,6	57,9	55,7	44,9	39,9	20,9	37,6

պես էլ 1979 թ.։ Երկրեզվության տարածման սահմաններն այստեղ որոշվում են ընտանեկան ոլորտի լեզվական վարքով և մանկական հիմնարկների գործունեությամբ։ 1970—1979 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում ավելի քան երկու անգամ աճել է ռուսաց լեզվին տիրապետող այդ երեխաների տեսակարար կշիռը, որն անուղղակիորեն վկայում է ընտանեկան ոլորտում ազգամիջյան հաղորդակցության լեզվի կիրարկման հետագա ընդլայնման, ինչպես նաև ռուսաց լեզվով գործող նախադպրոցական հիմնարկների ցանցի աճի մասին։ Ռուսաց լեզվի տարածման գործընթացում հանրակրթական դպրոցի մեծ նշանակության մասին պերճախոս վկայում են 11—19 տարեկանների խմբի տվյալները, ուր երկրեզվակիրների տեսակարար կշիռը 1979 թ. նախորդ տարիքային խմբի համեմատությամբ ավելացել է ավելի քան չորս անգամ։ Այս հանգամանքը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ կատարել հայ-ռուսերեն երկրեզվության տարածման գործում հանրակրթական դպրոցի դերի ու նշանակության վերաբերյալ։ Միության մյուս ազգային շրջաններում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունները վկայում են, որ ռուսաց լեզվին հաղորդակցվելու գործընթացում հանրակրթական դպրոցի նշանակությունն ամենուրեք մեծ է³։ Հանրապետության հայ բնակչության համար, ազգային կաղմի միատարրության պատճառով, դրա նշանակությունը բացառիկ բարձր է։

Հաջորդ տարիքային խմբում (20—29 տարեկան) դիտվում է Լրկեզվության տարածման ամենաբարձր մակարդակը ինչպես 1970 թ., այնպես էլ 1979 թ.։ Դա բացատրվում է դպրոցից բացի այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են ծառայությունը սովետական բանակում, ուսումը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում, արտադրական գործունեությունը։ Այս տարիքային խումբն արդեն ազդվում է ռուսաց լեզվի տարածմանը նպաստող բոլոր հանգամանքներից։ Ընդ որում, ի տարբերություն հաջորդ տարիքային խմբերի, բոլոր այդ գործոնների ազդեցությունը այս խմբի վրա համընկնում է այն ժամանակաշրջանին, երբ երկրի հասարակական կյանքում ազգամիջյան հաղորդակցության լեզվի դերն ու տարածումը հասել էին իրենց գերագույն աստիճանին (60—80-ական թվականներ)։ Երկրեզվության բարձր մակարդակը բնորոշ է նաև մյուս երկու տարիքային խմբերին՝ 30—39 և 40—49 տարեկան, որոնցից հետո դիտվում է անկում։ Երկրեզվության ամենից քիչ տարածված լինելը 60-ից բարձր տարիք ունեցող անձանց շրջանում բացատրվում է դարասկզբից մինչև 30-ական թվականները հանրապետության բնակչության մեջ գրագիտության ցածր տարածմամբ, քաղաքային բնակչության ցածր տեսակարար կշիռով և այլ հանգամանքներով։

² Հաշվարկված է ըստ՝ «Итоги всесоюзной переписи населения 1970 г.», т. 4, М., 1973, с. 382; «Численность и состав населения СССР по данным всесоюзной переписи населения, 1979 г.», М., 1984, с. 124.

³ Տե՛ս Մ. Ն. Губогло, Современные этноязыковые процессы в СССР (основные факторы и тенденции развития национально-русского двуязычия), М., 1984.

Աղյուսակ № 2

Ռուսաց լեզվի տարածման աղբյուրները (ըստ Երևանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի)⁴ % - ներով

Բնակչութ. խումբը	Ռուսերենին տիրապետելու աղբյուրները						
	զարգացում	լատին	միջատանի	միջատանի- միջատանի	բուհ, տեխ. նիկական	միջատանի- միջատանի	միջատանի- միջատանի
18—29 տարեկ.	60,1	8,6	9,1	3,8	12,2	4,4	1,5
աղամարդիկ	55,2	16,8	7,5	3,5	11,5	3,7	1,8
կանայք	65,6	—	10,8	4,2	13,0	5,3	1,3
30—49 տարեկ.	49,5	10,2	7,4	7,9	10,0	12,2	2,6
աղամարդիկ	44,6	18,1	5,8	7,6	9,3	11,5	2,8
կանայք	55,0	—	9,1	8,3	0,8	13,1	2,4
50 և ավելի	36,3	11,3	9,1	12,7	6,8	17,2	6,2
աղամարդիկ	31,4	19,2	7,5	12,4	6,1	16,5	6,5
կանայք	41,8	—	10,8	13,1	7,6	18,1	6,0
Մոզիալ-մասնագիտական							
չորակալորված ֆիզ. աշխատանքով զբաղվողներ	50,2	13,1	5,1	10,6	3,4	11,9	5,5
միջին որակավ. ֆիզ. աշխատանքով զբաղվողներ	56,3	11,3	4,2	7,9	1,6	12,1	6,3
բարձր որակավ. ֆիզ. աշխատանքով զբաղվողներ	51,3	24,5	5,2	6,8	1,8	7,6	3,1
ժառանգողներ	54,0	6,7	9,1	10,2	6,0	13,4	1,7
միջին օգակի մասնագետներ և ղեկավարներ	51,0	10,6	8,2	6,5	8,9	12,1	2,1
բարձրագույն օգակի մասնագետներ և ղեկավարներ	47,9	3,6	11,4	6,3	19,1	9,2	2,1
միջինը	50,8	9,3	8,5	7,4	10,3	10,2	2,8

Մարդահամարի նյութերի բացը լրացնում են էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերը (տղ. № 2)⁴։ Դրանք ևս վկայում են, որ հանրապետության հայ բնակչության մեծ մասի համար (50,8%) ռուսերենի տիրապետման գործում հանրակրթական դպրոցին առաջատար դեր է պատկանում։ Ընդ որում, անհատի տարիքը և ռուսաց լեզվի տարածման գործում հանրակրթական դպրոցի նշանակությունը գտնվում են հակադարձ կապի մեջ՝ որքան բարձր է անհատի տարիքը, նույնքան ցածր է դպրոցի նշանակությունը և հակառակը։ Այս եզրակացությունն ամբողջությամբ համընկնում է մարդահամարի տվյալների հետ և վկայում է այն մասին, որ հայ-ռուսերեն երկլեզվության զարգացման հարցերն, ինչպես այժմ, այնպես էլ մոտ ապագայում, պետք է լուծվեն հանրակրթական դպրոցում։

Ռուսաց լեզվի տարածման գործում մեծ է նաև բուհերի և տեխնիկումների (10,3%), արտադրական գործունեության (10,2%) գերը, ընդ որում, եթե տարիքի աճի հետ բուհի և տեխնիկումի նշանակությունը պակասում է

⁴ Իրականում հետազոտությունը անց է կացրել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի սեկտորը, որի աշխատակիցներին հեղինակը շնորհակալություն է հայտնում նյութերը տրամադրելու համար։ Հետազոտության ծրագրի մասին տե՛ս Ю. В. Арутюнян, Социально-культурные аспекты развития и обогащения нации в СССР (программа, методика и перспективы исследования) («Советская этнография», 1972, № 3, с. 3—25).

(12,2%-ից մինչև 6,8%), ապա արտադրական գործոնի նշանակությունը, ընդհանրապես, աճում է (4,4%-ից մինչև 17,2%): Գիտատեխնիկական հեղափոխության զարգացմանը համընթաց աճում է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող անձանց թիվը, իսկ ուսումը բուհում և տեխնիկումում արդեն զգալիորեն դժվարանում է առանց ազգամիջյան հաղորդակցության լեզվի անհրաժեշտ իմացության:

Էթնոսոցիոլոգիական հարցման նյութերից պարզվում է, որ կանանց համար հանրակրթական դպրոցի նշանակությունն ավելի մեծ է, քան տղամարդկանց: Կանանց մոտ, թերևս, մասամբ սրանով է փոխհատուցվում այնպիսի գործոնի պակասը, ինչպիսին ծառայությունն է սովետական բանակում, որը դպրոցից հետո երկրորդ տեղն է զբաղեցնում տղամարդկանց տարիքային բոլոր խմբերում: Եվս մեկ օրինաչափություն. տղամարդկանց տարիքը և երկրորդ լեզվի տարածման գործում բանակի նշանակությունը գտնվում են ուղիղ համեմատական կապի մեջ: Եթե ավագ սերնդի համար ծառայությունը բանակում շատ հաճախ ռուսաց լեզվին տիրապետելու միակ աղբյուրն էր, ապա ժամանակակից երիտասարդությունը, հանրապետության հասարակական կյանքում ռուսաց լեզվի նշանակության աճի և դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման բարելավման շնորհիվ, բանակ է զորակոչվում արդեն ազգամիջյան հաղորդակցության լեզվի բավարար իմացությամբ:

Դպրոցի՝ որպես ռուսաց լեզվի տարածման աղբյուրի, նշանակությունը հստակ երևում է նաև սոցիալ-մասնագիտական կտրվածքով դիտելիս: Հարցման ենթարկված բոլոր ֆիզիկական աշխատանքով զբաղվողները որպես ռուսաց լեզվի տարածման հիմնական աղբյուր նշել են հանրակրթական դպրոցը: Մեծ է նաև սովետական բանակի նշանակությունը: Ինչ վերաբերում է միջին և բարձր օդակի մասնագետներին և ղեկավարներին, ապա այստեղ դպրոցի նշանակությունը փոքր-ինչ պակասում է մյուս՝ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսման և արտադրական ոլորտի հաշվին: Ռուսաց լեզվի տիրապետման գործում բարձրագույն օդակի մասնագետներին և ղեկավարներին մեջ ընտանեկան ոլորտի համեմատաբար մեծ նշանակությունը վկայում է բնակչության այդ շերտերի լեզվական վարքում ազգամիջյան հաղորդակցության լեզվի համեմատաբար լայն տարածման մասին:

Ընդհանրացնելով ասվածը երկլեզվության տարածման աղբյուրների մասին, նշենք, որ հանրապետության ազգային միատարրության բացմանն հանդիսանում է լեզվի տարածման հիմնական աղբյուրը հանրակրթական դպրոցն է, և այս ուղղությամբ աշխատանքներ ծավալելիս անհրաժեշտ է անպայման հաշվի առնել այս հանգամանքը: Ինչպես բազմիցս նշվել է կուսակցական և կառավարական տարբեր փաստաթղթերում⁵, առաջիկայում հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի աճող սերնդի մեջ մայրենի լեզվի գերազանց իմացության վրա հիմնված ռուսաց լեզվի լավ տիրապետումը:

ՍՍՀՄ վերջին մարդահամարների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՀ-ում երկլեզվության աճի տեմպերը ամենաբարձրներից են միութենական հանրապետությունների մեջ: Ձեռնարկում բերված են Անդրկովկասի երեք հանրապետությունների և դրանց մայրաքաղաքների հիմնական էթնիկական ընդհանրությունների տվյալները երկլեզվության զարգացման մասին՝ 1970—1979 թթ.: Մարդահամարների նյութերի համաձայն, Անդրկովկասի միութենական հանրապետությունների երեք էթնիկական ընդհանրությունների մեջ էլ դիտվում է երկլեզվության աճ, ընդ որում, աճի տեմպերը տարբեր են: Ամենաբարձր աճը դիտվել է ադրբեջանցիների մոտ՝ 13,0%, ամենացածրը վրացիների՝ 5,4%: Հիշյալ ժամանակահատված

⁵ Այդ մասին տե՛ս Հ. Գալստյան, Լեզվական վարքի որոշ հարցեր (ըստ Երևանի բնակչության էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի), ՀՍՍՀ ԳԱ Վերաբեր հասարակական գիտությունների», 1983, № 2, էջ 31—37:

⁶ Տե՛ս, օրինակ, «Правда», 16.III.1981, 19.VIII.1982.

ծում երկլեզվության աճի տեմպերը հայերի մոտ մնացել են բավական բարձր, որի շնորհիվ էլ հանրապետությունում երկլեզվության տարածման ցուցանիշը հասել է 34,2%-ի:

Աղյուսակ № 3

Երկլեզվության տարածումը Անդրկովկասյան հանրապետությունների հիմնական էթնիկական ընդհանուր թվունների միջև ըստ 1970 և 1979 թթ. մարդահամարների նյութերի⁷

Հանրապետություն	Ընդամենը			Մայրենի լեզուն համարում են նույն էթնոսի լեզուն		Երկլեզվու են	
	թվաթիվ	բնակչ.	տոկոսը	թվաթիվ	տոկոսը	թվաթիվ	տոկոսը
Հայկական ՍՍՀ	1970	2208327	100	2203554	99,8	514631	23,3
այդ թվում՝	1979	2724975	»	2709591	99,4	932026	34,2
քաղաքային բնակչ.	1970	1383961	»	1379537	99,7	436651	31,6
այդ թվում՝	1979	1876955	»	1863110	99,3	782046	41,7
երևան	1970	730435	»	727666	99,6	266847	36,5
	1979	986812	»	977931	99,1	469264	47,5
դուռական բնակչ.	1970	824366	»	824017	100,0	77930	9,5
	1979	848020	»	846581	99,8	149980	17,7
Վրացական ՍՍՀ	1970	3130741	»	3111643	99,4	628703	20,1
այդ թվում՝	1979	3433011	»	3415920	99,5	876471	25,5
քաղաքային բնակչ.	1970	1338551	»	1336640	99,1	479187	35,8
այդ թվում՝	1979	1641987	»	1627448	99,1	635580	38,7
Խբիլիսի	1970	511379	»	506187	99,0	217747	42,6
	1979	656431	»	650953	99,2	260233	39,6
դուռական բնակչ.	1970	1792190	»	1785003	99,6	2149516	18,3
	1979	1791033	»	1783472	99,6	240891	13,4
Ադրբեջանական ՍՍՀ	1970	3776778	»	3734062	98,9	564023	14,9
այդ թվում՝	1979	4708832	»	4647611	98,7	1312319	27,9
քաղաքային բնակչ.	1970	1558788	»	1529153	98,1	462255	29,7
այդ թվում՝	1979	2163495	»	2115857	97,8	902423	41,7
Բաքու	1970	586052	»	563454	96,1	270494	46,2
	1979	854386	»	815106	95,4	473164	55,4
դուռական բնակչ.	1970	2217990	»	2204909	99,4	101768	4,6
	1979	2545337	»	2531754	99,5	499896	16,1

Ամենայն հավանականությամբ, երկլեզվության զարգացման բարձր տեմպերը Հայաստանում որոշակիորեն պայմանավորված են նաև դեպի հանրապետություն ուղղված ներգաղթային հոսանքներով: Ինչպես ցույց են տալիս առանձին հետազոտությունների նյութերը⁸, սովետական իշխանության տարիներին Վրաստանից, Ադրբեջանից և ՌՍՖՍՀ-ից Հայաստան տեղափոխված հայերի թիվը հասնում է մի քանի հարյուր հազարի: Ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի, միայն Երևանի ներգաղթած վերաբնակիչների թիվը գերազանցում է 150 հազարից: Սեփական էթնիկական միջավայր վերադարձած վերաբնակիչների և մանավանդ ՌՍՖՍՀ-ի, Բաքուի և մասամբ Թբիլիսիի նախկին բնակիչների լեզվական վարքում ուսաց լեզվի նշանակությունը զգալի է ինչպես ընտանեկան և արտադրական, այնպես էլ հասարակական-քաղաքական և գիտամշակութային ինֆորմացիայի օգտագործման ոլորտում:

⁷ Հաշվարկները կատարված են՝ ըստ «Итоги всесоюзной переписи населения 1970 г.», т. 4, М., 1973, с. 253—259, 263—272, 303—305; «Численность и состав населения СССР по данным всесоюзной переписи населения 1979 г.», с. 124—126, 134.

⁸ Տե՛ս Վ. Շ. Թովմասյան, Ս. Ն. Սիմոնյան, Աշխատութի վերաբնակչության բեզդոնա, առանձնահատկությունները, Երևան, 1985, էջ 119—123:

Այս խումբն իր լեզվական վարքում ուսաց լեզվի լայն օգտագործմամբ նպաստում է նրա տարածմանը և այս առումով ինչ-որ չափով փոխարինում է ուս ընակչությանը:

Երկլեզվության տարածման ցուցանիշները հայերի մեջ բավականին բարձր են նաև քաղաքային և գյուղական ընակչության կտրվածքով դիտելիս: Եթե վրացիների և ադրբեջանցիների մեջ երկլեզվության աճը քաղաքային և գյուղական ընակչության կտրվածքով դիտելիս համապատասխանաբար կազմել է 2,9%, 5,1% և 12,0%, 11,5%, ապա հայերի մեջ համապատասխան ցուցանիշները կազմել են 10,1% և 8,2%: Ազգային-ուսերեն երկլեզվության առավել լայն տարածումը ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի և երկրի ազգային մյուս շրջանների քաղաքային ընակչության մեջ բացատրվում է երկու հիմնական հանգամանքներով:

1. Քաղաքներում խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների առկայությունը պահանջում է ընակչության սոցիալ-մասնագիտական կառուցվածքի բարդացում և մեծաքանակ բարձրորակ մասնագետներ: Դրա հետ միասին գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում մասնագիտական բարձր որակաորումն արդեն անհնար է դառնում առանց ուսաց (իսկ վերջերս նաև տար լեզուների) իմացության:

2. Քաղաքները վարչական և մշակութային կյանքի կենտրոններ են: Երկրի հասարակական և մշակութային կյանքում ընթացող մերձեցման գործընթացները նպաստում են ազգամիջյան հաղորդակցության լեզվի տարածմանը:

Ինչ վերաբերում է գյուղական ընակչության մեջ ուսաց լեզվի թույլ տարածմանը, ապա դա բացատրվում է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են ընակչության սոցիալ-մասնագիտական կառուցվածքի պարզությունը, միգրացիոն ցածր ակտիվությունը, ազգամիջյան հաղորդակցության լեզվի տարածմանը նպաստող մի շարք ոլորտների պակասը կամ բացակայությունը և այլն: Չնայած այս ամենին, երկլեզվությունը տարածվում է նաև գյուղական ընակչության մեջ, որի մասին վկայում է թեկուզ այն հանգամանքը, որ երեք հանրապետություններում էլ գյուղական ընակչության մեջ երկլեզվության տարածման տեմպերն ավելի բարձր են, քան քաղաքային ընակչության մեջ:

Ազգային-ուսերեն երկլեզվության տարածումն ուղղված չէ ազգային լեզուների դուրս մղմանը: Անդրկովկասի ժողովուրդների մեջ երկլեզվության բուռն տարածումն ուղեկցվում է էթնիկական լեզուն մայրենի լեզու համարող մարդկանց թվի կայունությամբ: Սեփական միջավայրում երեք ժողովուրդներից միայն ադրբեջանցիների մոտ է մայր լեզվի կորուստը մեկ տոկոսից գերազանցում:

Ամփոփելով ասվածը Հայկական ՍՍՀ-ում ուսաց լեզվի տարածման մասին, նշենք, որ առաջադիմական նշանակություն ունեցող երկլեզվությունը հետզհետե իր մեջ է ներառում հանրապետության ամբողջ ընակչությանը՝ առանց սեռային, տարիքային, մասնագիտական կամ տարածքային սահմանափակումների: Երկլեզվությունն ավելի լայն է տարածված քաղաքային ընակչության մեջ, որը բացատրվում է քաղաքների՝ որպես արդյունաբերական, վարչական և մշակութային կենտրոնների դերով: Ընակչության էթնիկական միատարրության պայմաններում հանրապետությունում ուսաց լեզվի տարածման հիմնական աղբյուրը հանրակրթական դպրոցն է, որի նշանակությունը առաջիկայում դեռևս երկար ժամանակ բարձր կմնա:

К ВОПРОСУ РАЗВИТИЯ АРМЯНО-РУССКОГО ДВУЯЗЫЧИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

(по материалам переписей населения и этносоциологического
исследования)

АМБАՐՇՄ ԳԱԼՏՅԱՆ

Резюме

Анализ материалов переписей населения и этносоциологического исследования выявляет степень распространения армяно-русского двуязычия и основные тенденции его развития. За 1970—1979 гг. среди армянского населения республики доля двуязычных возросла с 23,4% до 37,6%, причем, если среди городского населения доля двуязычных возросла на 10,1%, то у сельского населения прирост двуязычия составил 8,2%. Благоприятное влияние фактора урбанизации на распространение армяно-русского двуязычия объясняется ролью городов как промышленных, административных и культурных центров, ибо сельская и городская среды формируют пока неодинаковую потребность во втором языке.

Анализ имеющихся источников показывает, что доминирующая роль в приобщении армян к русскому языку принадлежит общеобразовательной школе. Это обстоятельство объясняется этнической однородностью республики.